

Տ. ԱՍՈՂԻԿ ՔԱՐԱՎԱՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱԶԳԵՆ ՎԵՀԱՓԱՌՈՒ ՈՐՊԵՍ ՏՈՆԱԽՈՍ

**ԴԱՅՈՑ ԴԱՅՐԱՊԵՏԸ, ԴԻՐԱՎԻ, ՇԻՆԱՐԱՐ ԷՐ ԵՎ ԻՐ ԿՅԱՆՔՈՎ,
ԵՎ ԻՐ ԴԱՅՐԱՊԵՏԱԳՈՐԾՈՒԹՅԱՄԲ, ԵՎ ԻՐ ՔԱՇՑՐ, ՍԻՐԱՁԵ՛Դ
ՈՒ ԻՄԱՍՏՈ՛ՒՆ ԽՈՍՔՈՎ**

Ամենախնամ Ասպծո ողորմությամբ Ի դարի երկրորդ կեսին Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու առաքելակիմն հայրապետական գահին բազմեց մի Անձնավորություն, Ով կոչված էր հոգևոր միսրապործության, քաջազործության, միով բանիվ՝ հրաշագործության: Եվ նա՝ Հայոց Հայրապետը, լի էր շնորհոր ու իմաստությամբ: Նրա անձից ճառագում էր խաղաղարար լույս, քաջալերանք, ներշնչում, հույս, հավաքք և իհարկե՛ սեր, և այն էլ Հայոց Հայրապետի սրբին ու հոգուն խոսող ու շատ հարազար աստվածաշնչական վրկայության՝ սեր, որ «...ոչ երբէք անկանի» (Ա Կորնթ. ԺԳ 8): Եվ քննական է, որ առաքինացարդ Հայոց Հայրապետի ներաշխարհից բխած ամեն մի խոսք, ամեն մի հորդոր ու պարզամ որպես եռաքք ներ սուրալով պիտի ճեղքէր ամենայն պարմեշ ու միշրճվեր այդ խոսքին, հորդորին ու պարզամին ականջալոր յուրաքանչյուր հայորդու հոգու, սրբի ու միքի մեջ:

Հայոց Հայրապետը հիրավի շինարար էր և՝ Իր կյանքով, և՝ Իր հայրապետագործությամբ, և՝ Իր քաղցր, սիրազե՞ն ու իմաստուն խոսքով:

... Վազգեն Ա Հայրապետը գոնախոսու.

Եկեղեցու անդաստանում գոնախոսու է յուրաքանչյուր հոգևորական: Տոնը Եկեղեցու ողևորության ու գորեպնդման մշտարուխ ու հարանորոգ ակունքներից է, իսկ գոնախուսությունն այդ ականակիտ ակունքից բխած գուլալ ջրի մասրովակությունն է: Ահավասիկ Հայոց Հայրապետը նաև իմանալի մաքրվակ է, որ Իր գահակալության 39 տարիների ընթացքում անհոգնաբեկ խնկարկել է Յուր խոսքի, հորդորի ու պարզամի բուրգառը և անուշափությամբ պարուել հավաքավոր հայերին:

Հայոց Հայրապետի գոնախոսություններում գերակշիռ են Սուրբ Ծննդյան և Սուրբ Հարության գոնների առթիվ վրբված հայրապետական պարզամները, և դա հասկանալի է, քանի որ ընկալյալ ավանդույթ է Հայոց Եկեղեցում, ինչպես նաև Ընդհանրական Սուրբ Եկեղեցու մաս եղող մյուս Եկեղեցիներում, որ Եկեղեցու պետքերը, մնրազնյա կյանքում Ամենայն Հայոց Հայրապետը, հենց այդ սրբազնասուրը և ավելափոր գոններին անպայման իրենց մասնավոր պարզամն ավանդեն ի Տեր հուսացյալ հոգիներին:

Վազգեն Ա Հայրապետի գահակալության շրջանի՝ Սուրբ Ծննդյան և Սուրբ Հարության ամենամյա 39 պարզամներից յուրաքանչյուրն ինքնափիալ է ու բովանդակալից, հարուստ՝ գեղարվեստական պարկերներով, ինչպես նաև առավ՝ «դժվի երկինք բարձրացող գաղփնի ճամբայ»-ների մաքրնանշումով: Ծննդյան ու Հարության գոնախոսական պար-

գամներում հայոց Հայրապետին Իրեն հալուկ՝ պարզության մեջ վեն և բարձրաթռիչ ոճով ներկայացնում է աշխարհասասան իրադարձությունների պարմությունը և Իր առաջնորդությանն ու հովանակությանը հանձնված հոդին լիասիր ավելում «Զրիստոս ծնաւ և յայտնեցա» և «Զրիստոս յարեա ի մեռելոց»: Բերդենեմյան մսուրում Մանուկ Հնատի լույս ծնունդը ողջունելուց, օրինելուց և փառարանելուց հետո, ինչպես նաև հետուաք Տերունի թափուր զերեզմանում իրեշխակների հետ հանդիպմանը, գրուախոս Հայրապետին Իր ունկնդիրներին առաջնորդում և հաղորդակից է դարձնում Սուրբ Ծննդյան և Սուրբ Հարության խորհուրդներին ու դրանցից հորդած՝ աղամորդու հոգի-բարոյական կյանքը կապարելազորող պավուրաններին:

Անդրադանալով Սուրբ Ծննդյան և Սուրբ Հարության անժմարեկի ճշմարտություններին և մագնացույց անելով դրանց փրկազործ ներգործությունները մարդու կյանքում ընդհանրապես, Վազգեն Ա Հայրապետին Իր պարզամներում շբապում է վկայել այս հրաշագործությունների ու իրազործումների մասին, որոնք կարարվել են հայոց կյանքում և Հայապան աշխարհում Տիրոջ հրաշափառ Սուրբ Ծննդյան և Սուրբ Հարության լոյսի ներթափանցումը ի հայության մեջ:

«Մեր ազգ ալ կապարկանի այդ ժողովուրդներու ընկանիքին: Ավելի քան դասանինազ դարեր, հայ ժողովուրդը կառուցեց, տքնեցավ, սրեկդագործեց ու մարդունչեցավ, իբրև շաղախ ունենալով Զրիստոսի Ավելուարանի լոյսը: Նոր հավաքրին հուրով՝ հայոց ազգը ևս վերածնեցավ, պայծառակերպվեցավ, հանձնացավ» (Քարոզ Սուրբ Ծննդյան գրոնի առթիվ):

«Նոր կազմավորվող ու իր լինելության ուղին փնտրող հայ հոգին, հարուցյալ Զրիստոսի Ավելուարանով գրավ իմաստը իր գոյության և ձևերը իր ոգեկանության: Ավելուարանի լոյսով շաղախվեց ու արգասավորվեց իր հոգին: Մշակույթը և պատմությունը հայոց՝ արգասիքներն են այդ լոյսի, ազգային ինքնարիկ ձևերի ու կաղապարների մեջ: Լեզուն և գրականությունը, գիրությունը և դպրությունը, ճարդարապետությունն ու քանդակագործությունը, երաժշգույթներն ու նկարչությունը, այս գիրակցությունը բարոյականի, ծարավոր ճշմարիքի ու արդարի, դեռև ազատ ապրելու, զգացումը ընդունելան սրբության, հերոսական լմբունումը հայրենիքի սիրության անկողնչելի արժեքները, որոնք Զրիստոսի շնորհներով աճեցին ու ծաղկեցին հայոց ողջ պատմության ընթացքում» (Քարոզ Սուրբ Հարության գրոնի առթիվ):

Հարկ ենք համարում նշել նաև, որ Վեհափառ Հայրապետի՝ Սուրբ Ծննդյան և Սուրբ Հարության քարոզներն առանձնանում են խորը հուզականությամբ. Երբ ընթերցում ես այդ տրուերի առթիվ ասված հայրապետական պարզամները, հոգիդ համակվում է աշխարհասասան այդ ավելիսների պարզեցած քաղցր և վերանորոգիչ զգացումներով, կրոնական սկզբումներով, որոնք եւ, իրենց հերթին, ճանաչելի են դարձնում մեծ Հայրապետի հավաքրով պայծառակերպյալ, խաղաղահազ ու հավասարակշռված հոգեվիճակին: Այս, քանի որ միայն նման ներաշխարհ ունեցողն է ի զորու ամենահարազար ու ամենավավերական կերպով թարգմանը լինել մեծ, սքանչելի ու սուրբ Տնների հոգենորոգ ավելիսներին ու դրանց խորին խորհուրդներին:

Հայոց Առաքելական Եպիսկոպոսութեան ընդհանուր գործադրութեան մասին (1983 թ. պահպան)





ՔԱՐՈՉՈՒՄ Է ՎԵՐԱՓԱՌ ԿԱՅՐԱՊԵՏԸ

Սուրբ Ծննդյան և Սուրբ Հարության տոների պարզամներից զարդ Հայոց Հայրապետի տոնախոսություններում առկա են նաև խոսքեր՝ ասված Կաթողիկե Սուրբ Էջմիածնի, Վարդանանց, Թարգմանչաց և այլ տոների արիթմետրով, ինչպես նաև տոնախոս Հայրապետն Իր մրածումներն ու խոհերն է կիսել հավաքափոր հայորդյաց հետք Պահոց օրերի խոկումների ընթացքում և, ընդհանրապես, մեր Սուրբ Եկեղեցու տոնական համակարգում առկա այլնայլ տոների ու սրբոց հիշաբակությունների առիթմետրով:

Հարկանշական են Կաթողիկե Սուրբ Էջմիածնի դրույթների համար կամ խոսքերն ու պարզամները: Դրանցում Վազգեն Ա Հայրապետն Իր անհուն սերն ու անմնացորդ նվիրումն է արքահայրել Ամենայն Հայոց աստվածակառույց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հանդեպ, գեղարվեստական գունազերությամբ ներկայացրել Միաձնի երաշափառ էջրն ի դաշին Արքահայրյան, անդրադարձել Սուրբ Էջմիածնի կոչմանն ու առաքելությանը, շեշտել Սուրբ Էջմիածնի գերազահությունը Հայոց Եկեղեցու նվիրապետական համակարգում, վերաձայնել Սուրբ Էջմիածնի միջոցով ու օրինությամբ Հայկա Տան և մեր առաջին Լուսավորչաց վիճակի փրկարությունն ու փառավորումը: Կաթողիկե Սուրբ Էջմիածնի դրույթ առիթով Վազգեն Ա Հայրապետն ի վերջո վկայում է Հայոց Եկեղեցուն. «Սուրբ Էջմիածնի միշտ կրաշխվի ու չի նկազիր ինչքան բաշխվի, այնքան կշատրւանա, ինչքան լոյս սփռէ՝ այնքան կշողա: Դարեւը կուգան, դարեւը կանցնին, աև կրադրւան, կուսավորն և կներշնչն միշտ կյանք դալով՝ կապրի»:

Վարդանանց նահարակները Վազգեն Ա Հայրապետի համար եղել են մարմնավորությունները քրիստոնեական հավաքրի և ազգային ինքնազիփրակցության: Իր զահակալության 39 տարիների ընթացքում Հայոց Հայրապետը հաճախ է Իր խոհերն ու մրածումներն արդահայրել Վարդանանց դրույթը Իր խոկ անվանակոչության օրվա առիթով: Եվ ամեն անգամ Իր խոսքում անդրադարձել է Վարդանանց հերոսամարտի խորիրյին և զայիր սերունդներին Վարդանանց նահարակությամբ ավանդված պարզամին. «Դայրեննական վերածննդի մեր օրերին, ազգային վերածննդի արդի հրականության լոյսի դրակ, Վարդանանց հիշատակը հարգել ու դուռախտնել, մնալ հավատարիմ նրանց ողոն ու պարզաւին, նշանակում է մեր աշխարհականություն, մեր շինարար իրազործունելություն, մեր մարի ու կամեցողության դրսնորումներով, ավելի ու ավելի զորացնել, ամրապնդել արդի հայ պետականության հիմքերը, ավելի ու ավելի հսմախմբել հայ ժողովրդի զավակները ազատագրված մեր երկրի հողանասի վրա, ավելի ու ավելի ծաղկեցնել մեր ազգային մշակույթը»:

Ամփոփելով մեր համեստ խորիրածությունները Վազգեն Ա Հայրապետի տոնախոսությունների վերաբերյալ, եշենք, որ դվյալ դրույթը մաքուցված դրույթական գիրքելիքներից զարդ լուսահողի Հայրապետն Իր խոսքերում ու պարզամներում առանց բացառության շոշափում է ազգային-եկեղեցական կյանքին առնչվող և այդ կյանքը փոթորկող հարցեր: Շոշափում է և միևնույն ժամանակ, Իրեն հավորկ իմաստությամբ ու խորածափանցությամբ, դվյալ դրույթ հոգևոր խորիրդներից համապատասխան ու անհրաժեշտ հորդորն ու պարզամն է բխեցնում իրեն հանգուցալուծում ի հայր եկած խնդրի: Ի վերջո, Հայոց Հայրապետը յուրաքանչյուր դրույթ առիթով բաշխած Իր խոսքով հայորդու սերն ու

նվիրումն է ամրապնդում Հայոց Եկեղեցու, Հայոց Հայրենիի և Հայոց նվիրական սրբությունների հանդեպ:

Միուլ քանիվ, ինչպես Հայոց Հայրապետի Անձն էր ատինքնող, գրավիչ ու սիրելի, այնպես և Նորին Սրբության խոսքը, որ այսօր և զվարարած աշխարհի, վսրահարար, յուրաքանչյուրը պիհի ընթերցի հափշտակությամբ և հուզվի ու զմայլվի:

Երջանկահիշարքակ Վազգեն Վեհափառ մի ատիթով Իր իղձն էր արքահայրել՝ ասելով. «Մենք չափազանց միփթառված կիհնենք, եթե մի կարի լոյս Մեզանից հետո սկիզբնա մեր բազմադարյան Եկեղեցու պատմության գանձարանի մեջ, և մի շողով ավելի ճառագայթի Լուսավորչի անմար կանքին»:

Միրենի Հայրապետ Հայոց, թույլ գվեք ասեն, որ Ձերդ Սրբության հոգու փափազն իրագործվել է, և Լուսավորչի անմար կանթեղը ոչ թե մի շողով, այլ Վեհիդ օրինյալ հայրապետագործությամբ բյուրապարիկ ճաճանչներով ավելի է ճառագայթում՝ Հավաբք, Նոյս, Սեր և Լոյս սփռնով ի Տեր ապավինյալ հայ ժողովրդին ի Հայաստան, հԱրցախ և ի Ավյուտ աշխարհի:

Բյուր օրինություն Վազգեն Ա Շինարար Հայրապետի լոյս հիշարքակին. ամեն: